բնական է, որ Վանայ «գոռոզ» Մահմուտ բէկն այնպէս սիրով և պատուով ընդունեց քրիստոնէական ցնծալից թափօրը բերդի մէջ, նմանապէս և շատ բնական է այն ընդհանուր ուրախութիւնը, որ յայտնում էր ժողովուրդը Ս. Լուսաւորչի Աջի պատճառով տեղի ունեցած եկեղեցական հանդէսների և աղաղ աստուածպաշտութեան համար այնպիսի ժամանակներում, երբ ամբողջ Հայոց երկրում մի քրիստոնեայ իշխան և տէր չկար, որ հովանաւորէր քրիստոնեաներին, իսկ մահմէտական իշխանները մեծ մասով ծարաւի էին ս. եկեղեցու պաշտօնեաների և ժողովրդի արեանը։

Այս բազմարդիւն և օրինակելի գործունէութիւնն արդեօք թէ Ս. Լուսաւորչի Աջն Աղթամար տանելն եղաւ պատճառ, որ ժողովրդի սիրտը տաքացնող հայրապետի դէմ շարժուեցաւ մի տմարդի մեքենայութիւն, թէ ինչպէս. չգիտենք, 1464 թուի յիշատակարանն, * արձանագրել ուզելով նորա մահը, ասում է. «տէր Զաքարիա կաթուղիկոս է առ զէջմիածինն, և երկու տարի ի տեղն նստաւ, և դեղակուր եղև ի նոցանէ,» իսկ մի այլ յիշատակարան հակիրճ նշանակում է. «Զաքարիա կաթուղիկոսն դեղեցին, մեռաւ.» Արդէն Դաւրիժեցին յիշում է, որ Զաքարիա, Ս. Աջն Աղ-

* Նոտ. Հ. 220.